



ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ն հանդիսանում «ՀայԳունՄետ» խոշորագույն պետական գունավոր մետաղների մատակարար ընկերության իրավահաջորդը, որը հիմնադրվել է 1970թ. ապրիլին Հայաստանի Հանրապետությունում: 1995 թ - ին այն սեփականաշնորհվել է և վերակազմավորվել է "ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" փակ բաժնետիրական ընկերության: Ներկայումս ընկերությունը զբաղվում է շինանյութերի արտադրությամբ, հանքարդյունաբերությամբ, ճարտարապետական և դիզայնական աշխատանքներով, անշարժ գույքի բիզնեսով, շինարարական և վերանորոգման աշխատանքներով, ինչպես նաև սանիտարական կերամիկայի, խեցեղենի, պատի ծածկույթներ և այլ բարձրորակ շինանյութերի ներմուծմամբ և մանրածախ վաճառքով:

Մեզ համար ամենակարևորը մեր աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունն է, ուստի՝

- բոլոր վնասվածքներն ու աշխատանքի հետ կապված բոլոր հիվանդությունները հնարավոր է և պետք է կանխել,
- ղեկավարները պատասխանատու և հաշվետու են ընկերության անվտանգ գործունեության և աշխատակիցների առողջության համար,
- մենք կարևորում ենք աշխատակիցների ներգրավվածությունը վերապատրաստումներին,
- անվտանգ աշխատելը զբաղվածության նախապայման է,
- առողջապահության և անվտանգության գերազանց պայմանները ապահովում են հրաշալի բիզնես արդյունքներ,
- առողջապահությունը և անվտանգությունը պետք է ինտեգրված լինեն կառավարման բոլոր բիզնես գործընթացներում:

Որակը մեր հիմնական մրցակցային առավելությունն է, ուստի

- մեր հաճախորդների պահանջներն ու ակնկալիքները պետք է բավարարվեն,
- որակի կառավարումը ինտեգրված է մեր բոլոր բիզնես գործընթացներում,
- ղեկավարները պատասխանատու և հաշվետու են մատուցված ապրանքների և ծառայությունների որակի համար,
- որակի ապահովումը պետք է երաշխավորված լինի համակարգի ողջ մատակարարման շղթայում,
- որակի կառավարման գերազանցությունը անհրաժեշտ է բիզնեսում բարձր արդյունքների ապահովման համար:

Մենք շահագրգիռ ենք կառուցելու երկարաժամկետ և կայուն բիզնես և

- նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա մեր գործողությունների ազդեցությունը,
- բնական պաշարները և էներգետիկ ռեսուրսները օգտագործել առավել արդյունավետ,
- շրջակա միջավայրի պահպանության կառավարումն ինտեգրել բոլոր բիզնես գործընթացներում,
- ներգրավել աշխատակիցների, ովքեր հանձնառու և պատասխանատու են շրջակա միջավայրի պահպանության համար,
- հիմնել բաց և թափանցիկ երկխոսություն համապատասխան շահագրգիռ կողմերի հետ:

"ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" ՓԲԸ - ն առաջնային է համարում իր անձնակազմի առողջությունն ու անվտանգությունը, հաճախորդների բավարարվածությունը, շրջակա միջավայրի պահպանումը և համայնքների զարգացումը, որոնց հետ Ընկերությունը սերտորեն համագործակցում է: Ընկերությունը նպատակ է հետապնդում հասնելու վերոնշյալ թիրախներին՝ աշխատելով բաց և թափանցիկ:

"ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" ՓԲԸ - ն ամրապնդում է իր կառավարման օղակները՝ մշտապես կազմակերպելով վերապատրաստման և արդիականացման

դասընթացներ մենեջմենտի և կոնկրետ մասնագիտացված ոլորտներում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով աշխատակիցների գնահատմանը և մոտիվացմանը, նրանց հավատարմությանը Վարքագծի Կանոնակարգով սահմանված բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև նրանց կյանքի որակի և բիզնես կարիքների համարժեքությանը:

"ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" ՓԲԸ - ն ընդունում է սույն քաղաքականության իրագործման կարևորությունը Որակի, Առողջության, Անվտանգության և Շրջակա միջավայրի կառավարման համակարգերի միջոցով՝ ընդգրկելով ողջ մատակարարման շղթան՝ սկսած մատակարարներից մինչև սպառող և արտադրանքի արդյունավետ, համաձայն բնութագրերի օգտագործում: "ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" ՓԲԸ - ն պարտավորվում է կատարել առկա իրավական պահանջները, որոնք առնչվում են որակի, առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի պահպանման հարցերին:

"ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" ՓԲԸ – ն կիրառում է սույն քաղաքականությունը ողջ ընկերության շրջանակներում և վերապատրաստում է իր աշխատակիցներին որակի, առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի կառավարման համակարգերի ապահովման ուղղություններով, ինչպես նաև ներգրավում նրանց պարբերաբար կազմակերպվող հանդիպումներում և սահմանված նշաձողերի իրագործման ցուցանիշների գրանցման և վերանայման աշխատանքներում:

"ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" ՓԲԸ-ն պարտավորվում է պահպանել այս քաղաքականությունը և պարբերաբար թարմացնել, իրագործել և պահպանել կառավարման համակարգերը և շարունակաբար բարելավել որակի, առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության ցուցանիշները:

Մարտ 2010թ. (թարմացված է 2012թ. օգոստոսին)

Պապ Բադայյան
"ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ" ՓԲԸ
Գործադիր տնօրեն